ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ

23.05.2016 16:22

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը մայիսի 20-ին և 23-ին հյուրընկալել էր ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի աշակերտներին:
Աշակերտներն ու ուսուցիչները ՀՀ ՓՊ աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանի ուղեկցությամբ ճանաչողական շրջայց են կատարել Պալատի շենքում:
Նրանք ծանոթացել են ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության կարգին, հետաքրքրվել ունկնդիր դառնալու պայմաններով: Դպրոցի տնօրենի տեղակալ Ռոման Ահարոնյանը ներկայացրել է նրանց դպրոցի աշխատանքները, ուսուցման մեթոդները: Այնուհետև Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանը աշակերտներին ծանոթացրել է հանրային պաշտպանների կողմից իրականացվող պաշտպանության մանրամասներին:
Մայիսի 23-ին աշակերտներին և ուսուցիչներին ընդունել է նաև փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը: Նրանք քննարկել են փաստաբան բառի ծագումնաբանության, հասարակությունում և արդարադատության համակարգում փաստաբանի դերին և նրա գործունեությանը վերաբերող հարցեր:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })